ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 594 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 677-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2024 թվականի սեպտեմբերի 25-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ ապագա» ծրագրի մասին» N 677-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայնախագիծ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01503291) 2025 թվականի օգոստոսի 7-ին կնքված N 146/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների համար բնակելի տների կառուցման նպատակով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ

համայնքի Տավուշ բնակավայրում երկրաբանական հետազոտության աշխատանքների իրականացում՝ 3,335,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄՄՄ Ֆեմըլի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02273229) 2025 թվականի օգոստոսի 7-ին կնքված N 147/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընկերակցության «Ավեդիսյան» դպրոցի պատուհանների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 2,346,880 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Սիվիտա ԷյԷմ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557607) 2025 թվականի օգոստոսի 7-ին կնքված N 148/25 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Երեխաների հովանավորության» միջոցառման արդյունավետության ու ազդեցության գնահատման աշխատանքների իրականացում՝ 5,094,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ